**ՏԵՂԵԿԱՆՔ**

***«Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման ծրագրի ժամկետների փոփոխության վերաբերյալ***

Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակը («Գրասենյակ») ս.թ. օգոստոսի 29-ին ստացել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի գրությունը՝ ֆինանսատնտեսական կոմիտեի հանձնարարականի հիման վրա ներկայացնելու պարզաբանումներ *Հայաստանի Հանրապետության կառավարության, «ԷՖԱրՎի Մասրիկ» ՓԲԸ-ի («Կառուցապատող») և «Ֆոտովատիո Ռենյուաբլ Վենչրս» Էս. Էլ. ու «ԷՖԷսԷլ Սոլար» Էս. Էլ.-ի («Հովանավոր») միջև 2020 թվականի հունիսի 26-ին կնքված՝ Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի համայնքում «Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով փիրապետման և շահագործման մասին կառավարության աջակցության համաձայնագրի («Պայմանագիր»)* շրջանակներում ստորև նշված հարցերի վերաբերյալ.

- Որքանո՞վ են հիմնավոր Կառուցապատողի կողմից ներկայացվող փաստարկներն առ այն, որ աշխատանքների ձգձգումները և դանդաղումը՝ պայմանավորված 2022թ. սեպտեմբերի 13-ից սկսված՝ Հայաստանի Հանրապետության տարածքի վրա ադրբեջանական ագրեսիայի հետևանքով, համարվում են անհաղթահարելի ուժ Պայմանագրի իմաստով: Ի՞նչ ռիսկեր են պարունակում նման փաստարկների չընդունումը, և ինչպիսի՞ն են հետևանքները Հայաստանի Հանրապետության համար:
- Կառուցապատողը տեղեկացրել է, որ Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը 11 ամսով չերկարաձգելու պարագայում դիմում է արբիտրաժ: Ինչպիսի՞ն կլինի եկամուտներ/փոխհատուցումներ հարաբերակցությունը Հայաստանի Հանրապետության համար:

**Ա) Անհաղթահարելի ուժ**

Պայմանագիրն Անհաղթահարելի Ուժի դեպքն ընդհանրական ձևակերպմամբ սահմանում է որպես ցանկացած իրադարձությունների (կամ դրանց համակցություն) կամ հանգամանքների տեղի ունենալը, որոնք չեն գտնվում (կամ որի հետևանքներից ցանկացածը) ազդեցության ենթարկված Կողմի ողջամիտ վերահսկողության ներքո *(Պայմանագրի 14.1(a) կետ)*: Ընդ որում, Անհաղթահարելի Ուժի դեպքը կարող է ինչպես <u>թույլ չտալ</u> Ազդեցության ենթարկված Կողմին կատարել իր

պարտավորությունները Պայմանագրի ներքո *(14.1(a)(ii) կետ)*, այնպես էլ էապես հետաձգել Կայանի կառուցումը՝ Կառուցապատողի համար անհնարին դարձնելով Ծրագրի Ժամանակացույցի պահպանումը *(14.1(a)(iii) կետ)*:

Անհաղթահարելի Ուժի դեպքը Պայմանագիրն ավելի մանրամասն ձևակերպմամբ սահմանում է, ի թիվս այլնի, պատերազմը (լինի դա հայտարարված, թե՛ ոչ), ներխուժումը, զինված հակամարտությունը, արտաքին թշնամու գործողությունները կամ շրջափակումը, որոնցից յուրաքանչյուրը տեղի է ունենում Հայաստանի տարածքում *(Պայմանագրի 14.1(c)(v) կետ)*: Ընդ որում, եթե Անհաղթահարելի Ուժը, ուշացնում է որևէ Նշանակալից Ամսաթվի ապահովումը, կամ Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը, ապա յուրաքանչյուր նման Նշանակալից Ամսաթիվ, և/կամ Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը, ինչպես որ կիրառելի է, ճշգրտվում է Կողմերի կողմից՝ *(shall be adjusted)* հաշվի առնելու համար նման ձգձգման ազդեցությունը համապատասխան Նշանակալից Ամսաթվի կամ Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթվի վրա *(Պայմանագրի 4(b) կետ)*: Ավելին, այնքանով, որքանով Անհաղթահարելի Ուժի Դեպքը կանխել, խոչընդոտել կամ ուշացրել են Ազդեցության ենթարկված Կողմի կողմից սույն Պայմանագրի ներքո իր պարտականությունները կատարելը, համարվում է, որ Ազդեցության ենթարկված Կողմը չի խախտել սույն Պայմանագիրը կամ այլ կերպ պատասխանատվություն չի կրում իր պարտավորությունների նման չկատարման կամ կետանցի համար: Նշված պարտավորությունների կատարման ժամկետը պետք է համապատասխանաբար երկարաձգվի: Մյուս Կողմի համապատասխան պարտավորությունները կկասեցվեն և նշված պարտավորությունների համար ժամկետը կերկարաձգվի միևնույն չափով, որքանով այն երկարաձգվել է Ազդեցության ենթարկված Կողմի համար *(Պայմանագրի 14.4.(a) կետ):*

Այսպիսով, աշխատանքների ձգձգումները և դանդաղումը՝ պայմանավորված 2022թ. սեպտեմբերի 13-ից սկսված՝ Հայաստանի Հանրապետության տարածքի վրա ադրբեջանական ագրեսիայի հետևանքով, կարող է դիտարկվել որպես Անհաղթահարելի Ուժի դեպք Պայմանագրի վերոգրյալ հոդվածների լույսի ներքո: Նման որակումն ունի երկակի իրավական հետևանք. (1) ուշացված Նշանակալից Ամսաթիվը և/կամ Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը պետք է ճշգրտվեն Կողմերի կողմից, (2) Կառուցապատողը պատասխանատվություն չի կրում պարտավորությունների կատարման կետանցի համար:

**Բ) Արբիտրաժի հնարավորություն**

Պայմանագրային նման կարգավորումների համատեքստում ժամկետները երկարաձգելուց խուսափելը հնարավոր է հիմք տալ Կառուցապատողին՝ Պայմանագրի հիման վրա սկսելու արբիտրաժային վարույթ Հայաստանի Հանրապետության կառավարության դեմ: Բացի պայմանագրային վեճից, հնարավոր է նաև արբիտրաժային վեճ Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին կիրառելի երկկողմ համաձայնագրերի հիման վրա: Իհարկե, այս պարագայում Կառուցապատողը և Հովանավորը պետք է ապացուցեն, որ իրենց կողմից Ծրագրի իրականացմանն ուղղված գործողությունները հանդիսանում են «ներդրում», իսկ վերջիններս հանդիսանում են «օտարերկրյա ներդրող» համապատասխան համաձայնագրի իմաստով: Տվյալ պարագայում, Կառուցապատողի և Հովանավորի կողմից վեճ մեկնարկելու համար իրավական հիմք կարող են հանդիսանալ Նիդերլանդների թագավորության[1] և Չինաստանի ժողովրդական հանրապետության[2] հետ համապատասխանաբար կնքված երկկողմ համաձայնագրերը:

Արբիտրաժային գործընթաց նախաձեռնելու ռիսկերը հիմնականում կապված են վեճի բարենպաստ լուծման անորոշության, ծախսերի, ժամկետների և Կողմերի միջև համագործակցային մթնոլորտի վերացման հետ: Արբիտրաժային գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է լինելու ներգրավել նմանատիպ վեճերի բնագավառում փորձ ունեցող միջազգային իրավախորհրդատուների (2-3 մլն ԱՄՆ դոլար), փորձագետների (1-2 մլն ԱՄՆ դոլար), վճարել արբիտրաժային տրիբունալին (500,000-700,000 մլն ԱՄՆ դոլար), իրականացնել լսումների կազմակերպման հետ կապված ծախսեր, ինչպես նաև պահանջվելու են ներքին ռեսուրսներ՝ ներկայացուցչական աշխատանքները կազմակերպելու համար: Բացի դրանից, պետությունների մասնակցությամբ արբիտրաժային գործընթացը երկարատև է ու սովորաբար շարունակվում է մոտ 2.5 - 3 տարի: Ինչ վերաբերում է հարցադրմամբ ներկայացված եկամուտներ/փոխհատուցումներ հարաբերակցությանը, ապա դրա գնահատման համար անհրաժեշտ են հստակ տնտեսագիտական հաշվարկներ հայցի առարկայի ու հիմքերի շրջանակներում, որոնք տվյալ պահին հնարավոր չէ իրականացնել:

---

[1] Անհրաժեշտ կլինի պարզել՝ արդյոք Հովանավորը հիմնադրվել է Նիդերլանդների Թագավորությունում կամ ուղղակիորեն/անուղղակիորեն կառավարվում է Նիդերլանդների Թագավորությունում գրանցված ընկերության կամ Նիդերլանդների Թագավորության քաղաքացու կողմից:

[2] Թեև Համաձայնագիրը սահմանում է կողմերի մի շարք միջազգային իրավական պարտավորություններ, ինչպես օրինակ ներդրումների հավասարազոր կարգավիճակի ու պաշտպանության *(հոդված 3(1)*), երրորդ պետության ներդրողների ներդրումների պաշտպանությանն համարժեք պաշտպանություն տրամադրելու (*հոդված 3(2)*), առավել բարենպաստ ռեժիմ տրամադրելու (*հոդված 11*), ազգայնացման չափանիշներին հետևելու առնչությամբ, միջազգային արբիտրաժային տրիբունալի իրավազորությունը սույն դեպքում կողմերը սահմանափակել են բռնագրավման դեպքում փոխհատուցման չափին վերաբերող վեճերով (*հոդված 10*):

**Գ) Հնարավոր լուծումներ**

Հաշվի առնելով քննարկված Պայմանագրային դրույթների առանձնահատկությունները, նպատակահարմար է այս անգամ իրականացնել Կառուցապատողի առաջարկած աշխատանքների կատարման ժամկետների ճշգրտումները՝ համապատասխան ֆինանսական երաշխիքների պայմաններում: Միաժամանակ, գիտակցելով, որ Կառավարությունն արդեն մի քանի անգամ համաձայնել է ժամկետի երկարաձգման խնդրանքին: Իսկ, ժամկետների հնարավոր երկարաձգման հետագա պահանջները կանխելու նպատակով կարելի է Պայմանագրում իրականացնել փոփոխություն ու նախատեսել նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած կողմի պատասխանատվություն կրելու հանգամանքը (*տե՛ս «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՍՊԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը՝ հետագայում վերահաստատված այլ գործերի շրջանակներում*):

Միաժամանակ, Ձեր ուշադրություն ենք հրավիրում նաև Պայմանագրի 17.6 կետի վրա, ըստ որի՝ եթե Անհաղթահարելի Ուժի Դեպքը տեղի ունենա և շարունակվի 2 տարուց ավելի, Կառավարությունը կամ Կառուցապատողն իրավունք կունենան դադարեցնել Պայմանագիրը: Քննարկվող Անհաղթահարելի Ուժի հիմքով Պայմանագիրը դադարեցնելու դեպքում Կառավարությունը պարտավոր կլինի գնել Կայանը Անհաղթահարելի Ուժի Դեպքի Գնման Գնով, որը համաձայն Պայմանագրի Հավելված 3-ի որոշվում է հետևյալ բանաձևով. *Լուծման ամսաթվի դրությամբ Ավագ Պարտքի մայր գումարին գումարված ներդրված կապիտալը, հանած ապահովագրական հատուցումը*: Այսինքն, եթե հետագայում Կառուցապատողը ներկայացնի ժամկետների երկարաձգման առաջարկ, որը կներառի 2024թ. սեպտեմբերի 13-ին հաջորդող ժամանակաշրջանը ու պայմանով, որ ագրեսիան այդ ժամանակ շարունակական կլինի, Կառավարությունն ունի վերը շարադրված հնարավորությունը՝ դադարեցնելու Պայմանագիրը՝ Կայանը գնելու պայմանով:

*«30» օգոստոսի 2023թ.*